ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեպատ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ. Այգեպատ, (0235) 60095, aygepat.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունվարի 2017 թվականի N 01

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով `<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հարապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

Ավագանին որոշեց հաստատել Այգեպատ համայնքի ավագանու՝ 27.01.2017 թվականի թիվ 1 նիստի օրակարգը:

1.Այգեպատ համայնքի 2017թվականի տարեկան տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին :

2. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու , աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրուքաչափերը սահմանելու մասին:

3.Այգեպատ համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

4.Այգեպատ համայնքի 2017 թվականի բյուջեի հաստատում :

Կողմ (6)	Դեմ	(0) Ձեռնպահ
Կողմ ՉԱՔԱՐՅԱՆ ՑՈՒԱԿ		
Կողմ ԷԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ		
Կողմ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՄԱՐՏԻԿ		
Կողմ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ		
Կողմ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍՄԲԱԹ		
Կողմ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՐԴԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԵՐՅՈԺԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեպատ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ. Այգեպատ, (0235) 60095, aygepat.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունվարի 2017 թվականի N 02- Ն.

ԱՅԳԵՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ և ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 18 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով ,Տեղական տուրքերի և վճարների մասին ե Հայաստանի Հանրապետության օրենքով և ,Իրավական ակտերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով համայնքի ավագանին որոշում է՝

1.Այգեպատ համանքում 2017 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը ՝ համաձայն հավելվածի:

2.Շահումյան - Այգեպատ սահմանից մինչև Մ .Մաշտոց փողոցը համարել 1-ին գոտի: Սույն որոշման հավելվածի 4-րդ կետով սահմանված դրույքաչափը հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ:

3.Ուժը կորցրած ճանաչել ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 22-ին , Այգեպատ համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և դրուքաչափերի հաստատման մասին թիվ 18 որոշումը:

4. Սույն որոշումը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ

Հայտ ՉԱՔԱՐՅԱՆ ՅՈՒԼԱԿ
Հայտ ԷԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ
Հայտ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՄԱՐՏԻԿ
Հայտ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ
Հայտ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍՄԲԱԹ
Հայտ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՅՈԺԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * ԱՅԳԵՊԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ * 04200821 * ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի Այգեպատ համայնքի
ավագանու 27. 01 .2017 թ- ի թիվ 02 - Ն որոշման

ԱՅԳԵՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեպատ համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝
ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ.
բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ.
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 դրամ.
գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝
- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ:
2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշի նարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.
բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:
3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ 5000 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ 200 000 դրամ.

5) Խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի , հեղուկացված գազերի , տեխնիկական հեղուկների վաճառքի համար 60 000 դրամ

6) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10500 դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ.
այլ կառույցների (ադ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45000 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100000 դրամ.
բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100000 դրամ.
7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

8) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ 50000 դրամ՝
բ. Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100000 դրամ.
գ. Բաղնիքների (սաունաների) համար 400000 դրամ
դ. Խաղատների համար՝ 1000000 դրամ
ե. Շահումով խաղերի համար՝ 500000 դրամ
զ. Վիճակախաղերի համար՝ 150000դրամ

9) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ.

10) ավազանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների , յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.
գ. Սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ.
դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.
ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:
11) Համայնքի խորհրդանիշը (անվանում) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ.

Որոշմամբ սահմանված դրույքաչափերի համար կիրառել 0.5 գործակից , (4) ենթակետով սահմանված 1-ին գոտու դրույքաչափի համար հաշվարկել 0.75 գործակից :

5. Հայաստանի Հանրապետության Այգեպատ համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝

- մինչև 1 հա.-ի համար՝ 1000 դրամ,
- 1 հա-ից 10 հա-ի համար՝ 5000 դրամ,
- 10 հա և ավելի դեպքում՝ 10000 դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ.

6) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը յուրաքանչյուր ամսվա համար.

- Կենցաղային աղբի համար՝ 1 շունչ՝ 70 դրամ:
- Պետական և ոչ պետական հիմնարկները՝

  ա/ մինչև 20 քմ մակերես ունեցող շինությունների համար՝ 300 դրամ:

բ)20քմ. և ավելի մակերես ունեցող շինությունների համար՝ 500 դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Զաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեպատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեպատ, (0235) 60095, aygepat.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 03

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ , ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին " Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ , 28-րդ կետերով՝

1.Այգեպատ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել՝ 280 000 դրամ

2. Հաստատել՝ աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրուքաչափերը՝ համաձայն հավելվածի

Կողմ -3

1 Զաքարյան Ցոլակ
2. Պետրոսյան Սմբատ
3. Սաղաթելյան Վարդան

Դեմ -3.

1. Էլոյան Արսեն
2. Մելքոնյան Մարտիկ
3. Մելքոնյան Սարգիս

Որոշումը չընդունվեց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՍԵՐԳՈԺԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի Այգեպատ համայնքի
Ավագանու՝ 2017 թվականի հունվարի 27-ի թիվ 3-Ն որոշման

Գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափերը.

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 11
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ դրամ/
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ	ՊԱՇՏՈՆՆԵՐ	
Աշխատակազմի քարտուղար /1-2-1/	1	145.000
Աշխատակազմի գլխավոր մասնագետ/2-3-1/	1	140.000
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3-1-1/	1	117.000
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3-2-1/	1	113.000
Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3-3-1/	1	108.000
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
Գեղմասվար	1	95.000
Գրադարանավար	1	90.000
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Պահակ	2	75.000
Հավաքարար	1	75.000

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Զաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեպատ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ. Այգեպատ, (0235) 60095, aygepat.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունվարի 2017 թվականի N 04 -Ն

ԱՅԳԵՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Այգեպատ համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (6)	Դեմ	Ձեռնպահ
ԶԱՔԱՐՅԱՆ ՑՈԼԱԿ		
ԷԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ		
ՄԵԼՔՈՆՅԱՆ ՄԱՐՏԻԿ		
ՄԵԼՔՈՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ		
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍՄԲԱԹ		
ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՐԴԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՍԵՐՅՈԺԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի Այգեպատ համայնքի
Ավագանու՝ 27. 01 .2017 թ- ի թիվ 04 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՅԳԵՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
2017 – 2021 թթ. ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ



Այգեպատ 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....

1. Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում.....
2. Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶՔԾ-ի հիմնական նպատակների սահմանում.....
3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում.....
4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում....
5. Համայնքի ոլորտային ծրագրերի ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում, ֆինանսապես ապահովված ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում.....
6. ՀԶՀԾ-ի իրականացման մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման ձևաչափերը.....

Եզրափակում.....

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեպատ համայնքի 2017 - 2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից:

Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- Համայնքի բնակչության թվաքանակը.
- Համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի բովանդակությունը պայմանավորված է Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների աշխատանքով և առաջարկություններով,
համայնքում առկա ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությամբ, ինչպես նաև այն իրողությամբ, որ Այգեպատ համայնքը ունի մի շարք առաջնային խնդիրներ: Համայնքի զարգացման հնգամյա ծրագրում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, արտադրության, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը) և դրանց կառավարման միջոցառումները:

2017-2021թթ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելու համայնքի ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները: Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս

հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված Հայաստանի Հանրապետության ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների, կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում համայնքի զարգացման հնգամյա ծրագրում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

Համայնքի զարգացման, բնակչության սոցիալ –տնտեսական առաջընթացի ապահովման, սոցիալ- մշակութային քաղաքականության ներդրման և բարեկեցության մակարդակի բարձրացման նպատակով համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը հանդիսանալու է ամենօրյա աշխատանքային փաստաթուղթ:

1 .ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատում

Այգեպատ համայնքը ակտիվ կյանքով ապրող համայնք է, որտեղ առկա բոլոր կենցաղային, սոցիալ- տնտեսական, հոգևոր –մշակութային խնդիրները գտնում են իրենց լուծումը, համայնքի յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունի ակտիվորեն մասնակցելու համայնքում որոշումների կայացմանը և գործողությունների իրականացմանը:

1.2 Համայնքի աշխարհագրական դիրքը. պատմական ակնարկ

Այգեպատ համայնքը հիմնադրվել է 1828 թվականին: Այգեպատ գյուղը մինչև 1949թ.–ը անվանվել է Մասմլու , Մուսամլու : Գտնվում է Արտաշատի շրջանում , այժմ Արարատ մարզում. Արտաշատ քաղաքից 6 կմ արևելք , Երևան - Արարատ խճուղու ձախ կողմում՝ հարթավայրում : Մինչ 1956թ հարևան Այգեզարդ գյուղի հետ մեկտեղ կոչվել է Անաստասական:

Հետագայում գյուղերն առանձնացվել են . Այգեպատ է վերանվանվել 1956թ-ից : Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 865 մ բարձրության վրա : Կլիման բարեխառն է . ամռանը՝ տաք , ձմռանը՝ ցուրտ : Տարեկան միջին ջերմաստիճանը 20 C է , առավելագույն ջերմաստիճանը + 35 C -ից + 40 C, նվազագույնը՝ -25 C -ից -30 C Տարեկան միջին տեղումները 200 - 250 մմ , ձնածածկույթի հաստությունը 10- 30 սմ , վեգետացիայի շրջանը 200 - 230 օր է: Գյուղը սահմանակից է արևելքից Այգեզարդին հողատարածքներով սահմանակից է հյուսիս արևելքից Ոստանին , Վերին Արտաշատին , հարավ արևմուտքից՝ Շահումյանին:

Համայնքի տնտեսության մասնագիտացված ճյուղը գյուղատնտեսությունն է , համախառն բերքի մեծ մասը ստացվում է բուսաբուծությունից : Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 210 հեկտար , պտղատու և խաղողի այգիները կազմում են 87 հա , վարելահողերը՝ 107 հա : Զբաղվում են կաթնատու անասնաբուծությամբ, ոչխարաբուծությամբ , թռչնաբուծությամբ , մեղվաբուծությամբ :

Գյուղն ունի տիպային միջնակարգ դպրոց, բարեկարգ մշակույթի տուն, գրադարան, բարեկարգ մանկական խաղահրապարակ, բուժկետ, ատամնաբուժարան , հեռախոսային ցանց, փոստային բաժանմունք, ալրաղաց, խառը ապրանքների , շինանյութի և մթերային խանութներ, դեղատուն, ավտոգազալիցքավորման կայան ,անասնագոմեր , գործում են ավտոտեխսպասարկման համալ

անհրաժեշտ կետեր, ինչպես նաև հասարակական սննդի մեկ կետ:

Խորհրդային իշխանության ժամանակ, ըստ Հայաստանի վարչատերիտորիալ բաժանման 1971 թ –ին գյուղական խորհուրդը անվանվել է Այգեզարդ , որը Արտաշատ քաղաքից հեռու է 7 կմ , որի մեջ մտել են Այգեզարդ (Դարղալու),Այգեպատ (Մասմլու) ,

Քաղցրաշեն (Չորրորդ գյուղ), հեռավորությունը մինչև գյուղ խորհրդի կենտրոնը՝ Այգեպատից՝ 1 կմ , Քաղցրաշենից՝ 3 կմ :

Գյուղը մոտ է մի շարք պատմամշակութային հուշարձանների և բնակավայրերի : Այստեղից մինչև Խոր Վիրապ 12 կմ է, Դվին մայրաքաղաքի ավերակները՝ 8 կմ , Ոստանի թանգարանը՝ 4 կմ, Ազատավանի ջրաբուժարանը՝ 13 կմ , Շահումյան գյուղի Գրիգորի հեքիաթային աշհարհը՝ 3 կմ, Արցախյան ազատամարտիկների հերոսական անունը հավերժացնող հուշարձանը՝ 15 կմ:

1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է՝ 1752 մարդ,

այդ թվում տղամարդիկ՝ 810

կանայք՝ 942

Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը բերված է **աղյուսակ 1-ում:**

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը
1	2	3
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	1752
	Տղամարդիկ	810
	Կանայք	942
	0-6 տարեկան , այդ թվում՝	131
	- 0-3 տարեկան	77
	- 3-6 տարեկան	54
	7-17 տարեկան	219
	18-63 տարեկան	510
	63-ից բարձր տարեկան	212
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	250
	Տարիքային և աշխատանքային	250
3.	Փախստականներ	0
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	42
5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	15
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	47
	Մանկուց հաշմանդամներ	3
9.	Աշխատունակներ	0
10.	Զբաղվածներ	510
11.	Գործազուրկներ, այդ թվում՝	12
	Գրանցված	12
12.	Առկա տնային տնտեսությունների թիվը	392
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված	27

	ընտանիքների թիվը, այդ թվում՝	
	Նպաստառու ընտանիքների թիվը	34
14.	Հայրենական մեծ և արցախյան պատերազմներում զոհվածների ընտանիքների թիվը	9
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	37
	Անօթևան ընտանիքներ	0
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	12
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	33
18.	Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թիվը	52

1.4 Տեղական ինքնակառավարման մարմիններ

Ժողովրդի իշխանությունը իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար և համայնքի ավագանի 5 տարի ժամկետով: Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և Տեղական ինքնակառավարման մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ: Համայնքի ղեկավարն պաշտոնապես ներկայացնում է համայնքը, համայնքի գործադիր մարմինն է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և, Տեղական ինքնակառավարման մասին՝ Հայսատանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորություններ : Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի միջոցով: 2016թվականի սեպտմբերի 18 – ի ՏԻՄ ընտրությունների արդյունքում ընտրվել է համայնքի ղեկավար և ավագանին՝ բաղկացած 7 անդամից : Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը բերված է ստորև՝



Գրադարանավար

Գեղմասվար

Պահակ 2 միավոր

Հավաքարար	կարգի մասնագետ

- համայնքի ղեկավար	1հաստիքային միավոր
-աշխատակազմի քարտուղար -	1հաստիքային միավոր
-առաջատար մասնագետ -	1 հաստիքային միավոր
-առաջին կարգի մասնագետ -	1 հաստիքային միավոր
-երկրորդ կարգի մասնագետ -	1 հաստիքային միավոր
-Երրորդ կարգի մասնագետ	1 հաստիքային միավոր
-Գեղմասվար	1 հաստիքային միավոր
-Գրադարանավար	1 հաստիքային միավոր
-Պահակ	2 հաստիքային միավոր
-հավաքարար -	1 հաստիքային միավոր
Ընդամենը՝	11 միավոր

1.5 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքն ունի սեփականություն, որի իրավունքը պաշտպանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով: Համայնքի սեփականություն կարող են լինել անշարժ և շարժական գույքը, դրամական միջոցները և այլն: Համայնքապետարանը գտնվում է համայնքի Անկախության փողոց 6 հասցեում : Շենքային պայմանները բավարար են, գույքը նորացված, համալրված է համակարգչային տեխնիկայով: Գյուղը չունի գյուղտեխնիկա և այլ գյուղատնտեսական գործիքներ : Խմելու ջրի ներհամայնքային ցանցը հիմնովին վերակառուցվել է 2010 թվականին :

Ստորև ներկայացված է 22.12.2016թվականի դրությամբ համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը.

Հ/Հ	Անվանումը	Չափ. միավ	Քանակը	Հիմն.Միջոց Միասնական Ֆոնդ 12.2015թ.	Բալանսային Մնացորդային Արժեք 12.12.2016թ.	մաշվածք 12.12..2016թ.	Մուտք 2016թ.	Հաշվարկվել է մաշվածք 2016թ-ի վերջին	Հիմն.Միջոց Միասնական Ֆոնդ 12.12.2016	Բալանսային Մնացորդային Արժեք 12.12.2016	մաշված 12.12.2016
					Շենք, շինություն						
1.	Մշակույթի տուն	հատ	1		8897484						
2	Խոզանոցի շենք	Հատ	1		1237525						մաշված
3.	Հորթանոցի շենք	Հատ	1		2863707						մաշված
4.	Սերմնավորման շենք	հատ	1								մաշված
5.	Արհեստանոցի շենք	հատ	1		498729						մաշված
6	Մանկապարտեզի շենք										մաշված
	կիսակառույց	հատ	1		285290						
7.	Էլ.էնթակայան	հատ	1		115515						
8.	Ծառայողական										

9	մեքենա ՝Ռենո – Դաստեռ Ծառայողական ավտոմեքենա Գազ 3110	հատ հատ	1 1		6060000 0						4040000 2350000
10	Կենտրոնական փողոցի լուսավորություն				376934						
11	Գազաֆիկացիայի գիծ				2754502						
12	Ջրամատակարարման գիծ				683875						
13	Բազմոց մեկ հավաքածու										
14	Համակարգչի սեղան	հատ	1								
15	Մոնիտոր										
16	ՀամակարգչիՊ-4 սեղան	հատ	1								
17	Պատճենահանման սարք	Հատ	1								
18	Սեղան փոքր	հատ	1								
10	գրասեղան	հատ	3								
11	Տնօրենի սեղան	հատ	1								
12	Սեղան մեծ	հատ	1			-		-			-
13	Գազահաշվիչ և արկղ	հատ	1			-		-			-
14	Հուշարձան կոթող	հատ	1		980 000	-		-			-
15	Հուշարձան	Հատ	1		990 000	-		-			-
16	համակարգիչ	հատ	1								
17	ՈՒՊՍ	հատ	2								
18	հուշարձան	հատ	1		900 000						
19	Ձմեռային անվադող	հատ	2								
20											
	Գրադարանի գույք										
1	Երկաթյա դարակ	հատ	31								
2	Ընթերցասեղան	հատ	1								
3	Գրասեղան	հատ	1								
4	գրադարակ	Հատ	1								
5	Գրքեր	Հատ	5230								

1.6 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Այգեպատ համայնքը չունի գլխավոր հատակագիծ և գոտիավորման նախագիծ Քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթերից առկա է քաղաքաշինական կադաստրի վարման մատյանը, քաղաքաշինական կանոնադրություն և այլն: Համայնքը չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի): Այգեպատ համայնքում կանոնավոր կերպով իրականացվում է աղբահանություն՝ շաբաթը մեկ անգամ , սակայն համայնքի տարածքում աղբամանների բացակայությունը բացասաբար է անդրադառնում համայնքի արտաքին տեսքի և սանիտարահիգիենիկ պայմանների վրա: Համայնքը չունի աղբատար մեքենա :

Այգեպատ համայնքում միայն կենտրոնական փողոցն է ասֆալտված ցերեկային լուսավորությամբ : Գերեզմանատունը մասնակի ցանկապատված է , 2015 թվականին գերեզմանատուն տանող ճանապարհը խճապատվել է : Համայնքը գազաֆիկացված է , բնակչությունը ամբողջությամբ օգտվում է կապույտ վառելիքից : Համայնքը խմելու ջուր է ստանում Երևան քաղաքից գրաֆիկով:

1.7 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում չկան բազմաբնակարան բնակելի շենքեր, կան միայն բնակելի առանձնատներ:

Բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 42850 քմ: Համայնքում առանձնատների թիվը՝ 285 և դրանց ընդհանուր մակերեսը՝42850 քմ, բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը՝54 : Համայնքի առանձնատների մի մասը վերանորոգված են, նորաբաժան ընտանիքների համար Անհրաժեշտ են նոր առանձնատներ : Սակայն, բնակչության սոցիալական վատ պայմանների պատճառով առանձնատների կառուցման և վերանորոգման աշխատանքներ կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքերում, իսկ նոր առանձնատներ հաճախակի չեն կառուցվում

1.8 Զբաղվածություն

Համայնքի վարչական տարածքի բնակչության ընդհանուր թվաքանակից զբաղվածներ՝ 887 մարդ, այդ թվում՝ ոչ գյուղատնտեսական աշխատանքով զբաղվածներ՝ 51 մարդ, գյուղատնտեսական աշխատանքներում զբաղվածներ՝ 44 մարդ, 33 մարդ մեկնում է արտագնա աշխատանքների:Աշխատանքների պակասը և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները խթանում են բնակչության արտագնա աշխատանքի մեկնելուն:

Համայնքի տարածքում գործում 5 խառը խանութներ,1 շինանյութի խանութ,1 գազալցակայան , հանրային սննդի օբյեկտ , ավտոտեխ սպասարկման 1 կետ :

Բնակիչների հիմնական եկամուտը ստացվում է սեփականաշնորհված վարելահողերի և տնամերձ հողամասերի մշակումից, թոշակների և նպաստների ստացումից: Այս հիմնախնդիրների հաղթահարման հիմնական ճանապարհը ինտենսիվ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվելն է, ջերմոցային տնտեսությունների ստեղծումը:

1.9 Հողօգտագործում

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության

Մարզ	Արարատ	3
	(անվանում)	(Կոդ)
Համայնք	Այգեպատ	
	(անվանում)	(Կոդ)

N	Նպատակային նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակություն	Կոդի NN	Ընդամենը (2+3+4+8+12)	Սեփականության						
					ՀՀ քաղաքացիների	ՀՀ իրավաբանական անձանց	համայնքային				
							ընդամենը (5+6+7)	անհատույց օգտագործ	տրված վարձակալության	մնաց վարձակալության	ընդամենը (9+10+11)
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահող		19.75	9.59		10.16		10.16		
1.2		բազմ տնկարկներ, ընդամենը		140.59	14.71		0.47		0.47		
.2.1		այդ թվում՝ պտղատու այգի		84.14	84.14						
.2.2		խաղողի այգի		63.44	62.97		0.47		0.47		
.2.3		այլ բազմամյա									
1.3		խոտհարք									
1.4		արոտ									
1.5		այլ հողատեսքեր		16.92			16.92			16.92	
1		Ընդամենը		184.25	154.70		27.55		10.63	16.92	
2.1	2.Բնակավայրերի	բնակելի կառուցապատման		70.85	50.71		20.14			20.74	
.1.1		այդ թվում՝ տնամերձ հողեր		50.71	50.71						
.1.2		այգեգործական (ամառ-ն)									
2.2		հասարակական կառուցապ.		6.22	0.61	0.11	36.87			36.88	1.81
2.3		խառը կառուցապատման									
2.4		ընդհանուր օգտագործման		7.69			7.69			7.69	
2.5		այլ հողեր		0.67			0.67			0.67	
2		Ընդամենը		75.43	51.33	0.11	32.19			32.19	1.81
3.1	3. Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ. նշանակութ. օբ.	արդյունաբերության									
3.2		գյուղտնտեսական, արտադր.		7.89	3.60		4.29			4.29	
3.3		պահեստարանների									
3.4		ընդերք օգտագործման									
3		Ընդամենը		7.89	3.60		4.29			4.29	
4.1	4.Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակ. օբ.	Էներգետիկայի									
4.2		կապի									
4.3		տրանսպորտի		4.70			1.50			1.50	3.20
4.4		կոմունալ ենթակառուցվածք		0.02			6.02			6.02	
4		Ընդամենը		4.72			1.52			1.52	3.20
5.1	5. Պահպանվող տարածքներ	բնապահպանական									
.1.1		այդ թվում՝ արգելոցներ									
.1.2		արգելավայրեր									
.1.3		ազգային									

		պարկեր									
5.2		առողջարարական									
5.3		հանգստի									
5.4		պատմական և մշակութային		0.04			0.04			0.04	
5		Ընդամենը		0.04			0.04			0.04	
6	Հատուկ նշանակության	Ընդամենը									
7.1	7. Անտառային	անտառ									
7.2		թփուտ									
7.3		վարելահող									
7.4		խոտհարք									
7.5		արոտ									
7.6		այլ հողեր									
7		Ընդամենը									
8.1	8. Ջրային	գետեր									
8.2		ջրամբարներ									
8.3		լճեր									
8.4		ջրանցքներ									
8.5		հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.									
8		Ընդամենը									
9.1	9. Պահուստային	աղուտներ									
9.2		ավազուտներ									
9.3		ճահիճներ									
9.4											
9.5		այլ անօգտագործելի հողեր									
9		Ընդամենը									
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9)				282.30	211.62	0.11	65.59		10.63	54.96	50.1

1.10 Գյուղատնտեսություն

Համայնքում զբաղվածության հիմնական ճյուղը հողամշակությունն է , զբաղվում են կարտոֆիլի ,առվույտի , ծաղկի և այլ բանջարա- բոստանային կուլտուրաների արտադրությամբ : Համայնքում անասնապահությամբ զբաղվում են 10 ընտանիք

Հ/Հ	Յուցանիշները	Ընդամենը համայնքում
1	2	3
1.	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, այդ թվում՝	509
	Կովեր	165
2.	Խոզերի գլխաքանակը	21
3.	Ոչխարների և այծերի գլխաքանակը	1864
4.	Ավանակների և ջորիների գլխաքանակը	8
5	Ձիերի գլխաքանակը	9

6.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	1433
7.	Նապաստակների և ճագարների գլխաքանակը	18
8.	Մեղվաընտանիքների քանակը	150

1.11. Բնության և շրջակա միջավայրի պահպանություն

Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը նորմալ կեսագործունեության ամենաանհրաժեշտ գործոնն է, որի հետևանքով էլ համայնքի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը ազգաբնակչության կենցաղային աղբի տեղափոխման և համայնքի տարածքի մաքրության հարցն է: Համայնքում մի շարք տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը հանրային սննդի կազմակերպման և արտադրական հիմնարկների գործունեության բնագավառում շատ օգտակար է, մյուս կողմից նրանց շրջակայքը ամենօրյա մաքրման, աղբի հեռացման խնդիր ունի: Բնակչության կենցաղային աղբի հեռացումը և համայնքի տարածքի աղբահանության կազմակերպումը այսօր բավարար հիմքերի վրա է, սակայն անհրաժեշտ է օր-օրի որոնել և օգտագործել նոր տեխնոլոգիաներ բնության և շրջակա միջավայրի պահպանության ապահովման համար:
Համայնքի բնակիչներից շատերը դեռևս տնտեսական, հաճախ նաև շինարարական աղբը թափում են աղբի համար անթույլատրելի տարածքներում: Սանիտարական մաքրման և աղբահանության ասպարեզում անելիքները դեռևս շատ են: Տնտեսության առջև ծառացել են բազմաթիվ խնդիրներ, որոնց շուտափույթ լուծումը կօժանդակի աղբահանության աշխատանքների օպերատիվ իրականացմանը: Այդպիսի խնդիրներից են աղբահան մեքենաներ չունենալը :

Աղբահանության ծավալների ավելացման դեպքում նաև առաջանում մեքենայի ձեռքբերման անհրաժեշտություն:

1.12 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքը կենտրոնին կապող միջհամայնքային ճանապարհները հիմնականում ասֆալտապատ է, ունի որոշ հատվածներում փոսային նորոգումների խիստ կարիք : Ներհամայնքային ճանապարհների մոտ 80 %-ը բարեկարգ են, խճապատված են , կարիք ունեն մշտական նորոգումների , Համայնքում տեղադրված չեն ճանապարհային երթևեկության նշաններ: Համայնքի ներսում ավտոկանգառներ չկան: Համայնքում տարածքով անցնում է մեկ ավտոբուս և մեկ միկրոավտոբուս ; Միջհամայնքային , ներհամայնքային և միջպետական ճանապարհները անցանելի են և գտնվում են բարվոք վիճակում:

1.13 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի ընդհանուր հիմնական դպրոց , կառուցվել է 1967 թվականին , մասնակի վերանորոգվել է 2007 թվականին, տանիքը հիմնովին վերանորոգվել է սոցհիմնադրամի ծրագրի շրջանակներում : Դպրոցի շենքը ունի կապիտալ վերանորոգման կարիք , չունի սան հանգույց, կոյուղի : Դպրոցի տարածքը՝ 1.810հա , համայնքի աշակերտների թիվը՝ 188 , դպրոցը ունի 26 աշխատող , որից ուսուցիչների թիվը 22 :

Համայնքը չունի մսուր մանկապարտեզ :

1.14 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի բուժ կետ :
Բուժ կետը ունի երեք աշխատող , ունի անհրաժեշտ գույք և սարքավորումներ :

1.15 ՄՇԱԿՈՒՅԹ ՍՊՈՐՏ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Գյուղը ունի մշակույթի տուն ,մանկական հրապարակ , Համայնքն ունի գրադարան , որը համալրված է 5600 միավոր գրքով , այն տեղակայված է մշակույթի տան շենքում և գործում է:

1.16 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում են համապատասխանաբար առևտրի օբյեկտ՝ հիմնականու 4 գբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքներ վաճառքով, համայնքում գործում է 1 գազալցակայան , ավտոտեխսպասարկման կետեր ,նրանց բոլորն էլ հաշվառված են պետական հարկային մարմնում, ինչպես նաև եռամսյա կտրվածքո համայնքի բյուջե են վճարում համապատասխան տեղական տուրք՝ գործունեությա թույլտվության համար: :

1.16 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

* Համայնքը ունի ԲՈՒՀ-երի տարբեր մասնագիտությունների մոտ 50 շրջանավարտներ ,
*Համայնքում մեծ աշխատուժի առկայություն,
*Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար առկա հողային բավականին մեծ ռեսուրսների առկայություն,
*Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիմա,
*Համայնքում առկա հիմնական գործող դպրոց,
*Համայնքում հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը,
*Համայնքում խմելու ջրի ներհամայնքային գործող համակարգի առկայություն,
*Կենտրոնական փողոցների լուսավորում,
*Համայնքում գազամատակարարման առկայություն,
*Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքը Արտաշատի, Երևանի և Հովտաշատի մեծածախ շուկաներում վաճառելու հնարավորություն:

1.17 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

* Ոռոգման ջրերի ներտնտեսային ցանցում ջրի և ժամանակի կորստի առկայություն
* Հիմնական դպրոցի վերանորոգում
*Բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողների գործազրկության բարձր մակարդակ,
* Գյուղատնտեսական մթերքների իրացման ապառիկ վճարման և ցածր գների պատճառով գյուղացու եկամուտների նվազում,

- Մանկապարտեզի , սպորտի և արվեստի դպրոցների շենքերի բացակայություն ,
- Միջհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակը
- Համայնքում աղբահանության ծառայության կազմակերպման փոքր մաշտաբը և ցած մակարդակը, ժամանակակից աղբավայրի, աղբահանության և սանիտարական մաքրմա

ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազայի և ֆինանսակա
հնարավորությունների բացակայություն,

- Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը,
- Համայնքում սոցիալապես խոցելի շատ ընտանիքների առկայություն,
- Համայնքում տարեցտարի շարունակվող արտագաղթը՝ իր բոլոր բացասական հետևանքներով

1.18 ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մեծ աշխատուժի առկայություն
- Ուղղակի ընտրություններով համայնքի ղեկավարի ընտրության հանրավորություն

1.19 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Համայնքում ոռոգումը իրականացվում է մեխանիկական եղանակով, պոմպերի միջոցով, պոմպերի խափանման և հոսանք չլինելու դեպքում համայնքը կզրկվի ոռոգումից, Չկան խողովակներ և կիսախողովակներ ոռոգման ցանցերի վերանորոգման համար , *Համայնքում բնակիչների հարկային պարտավորությունների կատարման ոչ բավարար վիճակ,
- Աղբամանների բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգ,
- Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը:
- Գարնանային վարարումների հետևանքով սելավատարին կից հողամասերի հեղեղում,

1.20 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքում վերջին տարիների ընթացքում նկատելի էր որոշակի դրական տեղաշար
ՏԻՄ-երի և բնակչության փոխհարաբերություններում: Ներկայումս նոր ձևավորված ՏԻՄ-եր
գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային, որը զգալիորե
նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին
կատարած աշխատանքներին: Համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորե
մասնակցել ՏԻՄ–երի կողմից կազմակերպված հանրային հանդիպումներին ու միջոցառումներին
Համայնքներում կազմակերպվում են հանրային լսումներ և քննարկումներ (մասնավորապես
համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգայի
տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստմա
դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-երը
աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ: Հիմնականու
բոլոր միջոցառումները, այդ թվում նաև ավագանու նիստերը, տեղադրվում են համայնք
պաշտոնական էջում `aygepat.ararat@mta.gov.am–ում , որը նպաստում է ՏԻՄ-երի գործունեությա
նկատմամբ բնակչության վստահության ամրապնդմանը:Համայնքի ավագանու կողմից ընդունվել ե
տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կի

խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բա
լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը, որոնք մեծապե
կնպաստեն բնակիչների ավելի ակտիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը:

1.21 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը ներկայում
սաղմնային վիճակում է: Համայնքը ունի բնակչության տարահանման հանձնաժողովը
բնակչության տարահանման գործողությունների պլանը ընթացքի մեջ է :

Համայնքում առայժմ չի իրականացվել տեղական մակարդակում խոցելիության
կարողությունների գնահատման որևէ գործողություն, որի հիման վրա հնարավոր կլինել
պլանավորել ու իրականացնել համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցմա
նպատակամետ գործողություններ ու միջոցառումներ: Այս խնդիրը կարևոր է, համայնքի
սպառնացող աղետների ռիսկի կանխմանը :

1.22 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող արտադրակա
ՍՊԸ-ների և ԱՁ-ների, առևտրի մանր կետերի ,որոնց հետ ՏԻՄ-երը պաշտպանում են լավ ո
բարյացկամ հարաբերություններ: Սակայն, դրանով հանդերձ, միևնույն է, համայնքում բիզնես
վիճակն առանձնապես բարվոք համարել չի կարելի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Խելամտորեն օգտագործել համայնքի ֆինանսական միջոցները,
- Խթանել քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածներից որակյալ մասնագետների հոսքը համայնքի աշխատակազմ՝ հնարավորինս բարձրացնելով համայնքային ծառայողների և այլ աշխատողների աշխատավարձերի դրույքաչափերը
- Էականորեն բարձրացնել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ի հաշիվ ավելի որակյալ մասնագետների աշխատանքի, տեղեկատվական արդի համակարգերի ներդրման և արդյունավետ շահագործման
- Բարձրացնել Տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնության մակարդակը մշակելով և իրականացնելով նպատակամետ ու արդյունավետ համայնքային քաղաքականություններ, ռազմավարություններ և ծրագրեր,
- Աստիճանաբար ընդլայնել համայնքի բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների շրջանակը, կիրառել յուրաքանչյուր ծառայության մատուցման մասշտաբի էֆեկտը (նվազեցնելով ծառայության միավորի վրա կատարվող ծախսերը), ըստ այդմ՝ բարձրացնել ծառայությունների մատուցման ծավալները և արդյունավետությունը, և, որպես հետևանք, բնակչությանը դրանց հասանելիության և որակի մակարդակները
- Համայնքի տարածքում նպաստել տնտեսության տարբեր ճյուղերի (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի և այլնի) զարգացմանը՝ օգտվելով համայնքում բնական պաշարների և այլ արժեքների առկայությունից
- Մեղմացնել համայնքում Տեղական Ինքնակառավարման վրա բնակիչների ազգակցական կապերի հնարավոր բացասական ազդեցությունները

- Նպաստել համայնքի ավագանու ինստիտուտի կայացմանը, որի շնորհիվ կուժեղանա համայնքի ներքին վերահսկողության համակարգը և, արդյունքում, կբարձրանա համայնքի ընդհանուր կառավարման արդյունավետությունը
- Բարձրացնել համայնք Տեղական ինքնակառավարմանմարմիններ փոխհարաբերությունների և համագործակցության մակարդակը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների հետ՝ նպաստելով համայնքի աստիճանական զարգացմանը
- Հնարավորինս արագ կայանալ և պատրաստ լինել՝ ընդունելու և իրականացնելու Տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով ակնկալվող նոր սեփական և պատվիրակված լիազորություններ՝ համապատասխան ֆինանսական միջոցներով
- Համայնքում ստեղծել լուրջ նախադրյալներ և նպաստավոր պայմաններ ժողովրդագրական աճի, սոցիալ-տնտեսական և տեղական ժողովրդավարության զարգացման համար՝ ավելացնելով ընտանիքների եկամուտները և բարձրացնելով բնակչության ընդհանուր կենսամակարդակը, հաղթահարելով աղքատությունը և կանխելով արտագաղթը
- Համայնքի վարչական տարածքում զարկ տալ ջերմոցների ստեղծմանը՝ նպաստելով գյուղատնտեսության զարգացմանը,
- Տարածաշրջանի այլ համայնքների հետ միջհամայնքային համագործակցություն ծավալելու դեպքում հնարավոր կլինի լուծել ընդհանուր աղբավայր ունենալու և շահագործելու հարցը, համայնքում պատշաճ մակարդակով կազմակերպելու աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը,
- Միջհամայնքային տրանսպորտային հաղորդակցության, ինչպես նաև հաղորդակցության այլ միջոցների հասանելիության ապահովման միջոցով նպաստել ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության, համայնքային ծառայությունների մատուցման մակարդակի կտրուկ բարձրացմանը, արտաքին աշխարհի հետ նոր կապերի ու համագործակցության հաստատմանը և համայնքային տնտեսությունում լրացուցիչ ներդրումների ապահովմանը:
-

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Այգեպատ համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող տարածք:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- չխորացնել համայնքի զարգացմանը խոչընդոտող և ապահովել համայնքի աստիճանական ինտեգրումը և համաչափ զարգացումը,
- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի, բանջարեղենի հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծում և գործարկում,
- համայնքի տարածքի համեմատական առավելությունների բացահայտում և առևտրայնացում այդ նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների

Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպություններ համագործակցության շրջանակների ընդլայնում և ջանքերի մեկտեղում,

- համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկներ գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշա մակարդակով մատուցման միջոցով,
- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործուս նորոգում և զարգացում,
- միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգուս ջրահեռացման և արտաքին լուսավորության համակարգերի անցկացում, ճանապարհայի նշանների տեղադրում, ավտոկանգառների ժամանակակից տաղավարների կառուցում,
- համայնքի բնակչության սոցիալ–տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվու հանրային ծառայությունների տեսակների (ջրամատակարարում և ջրահեռացուս գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարակա մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական կրթությունն արտադպրոցական դաստիարակություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- համայնքի Տեղական ինքնակառավարման մարմինների , աշխատակազմի, համայնքայի կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների աստիճանական հզորացուս տեղական ժողովրդավարության ամրապնդում, համայնքում պատշաճ կառավարմա սկզբունքների հետևողական իրականացում,
- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների ներգրավվածության բարելավում՝ բնակիչներ մասնակցության ձևերի ներդրման և զարգացման միջոցով,
- Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում
- համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների ներդրում հետևողական կիրառում,
- նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչությա թվաքանակի կայունացում:

Համայնքի զարգացման 2017 – 2021 թթ. ծրագրի հիմնական նպատակներն են՝

- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում՝ մասնակցությա նոր մեթոդների և ձևերի ներդրման և աստիճանական զարգացման միջոցով,
- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության թռչնապահության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում լուսավորում,
- համայնքի կենտրոնում հասարակական տրանսպորտի գործունեության բոլոր ավտոկանգառների ստեղծում,

- համայնքի դպրոցական հանրակրթության պայմանների բարելավում՝ դպրոցների շենքերի նորոգման և ջեռուցման, ներքին հարդարման, դռների, պատուհանների փոխարինման միջոցով,
- համայնքի բնակչությանը հանրային ծառայություններ մատուցող համայնքային հիմնական ենթակառուցվածքների (մանկապարտեզների, մշակույթի տների և ակումբների, գրադարանների, բուժկետերի) շենքերի հիմնանորոգում կամ վերակառուցում,
- համայնքում գործարար միջավայրի բարելավում՝ նոր աշխատատեղեր ստեղծող անհատների և կազմակերպություններին խրախուսելու (օրինակ, տեղական հարկերի, տուրքերի և վճարների գծով արտոնություններ տրամադրելու) միջոցով:

3.ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

2017-2021 թթ. ընթացքում համայնքի Տեղական ինքնակառավարման մարմինները նախատեսում են լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում սերտ համագործակցություն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017-2021թթ.-ին նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով:
- Վարչական շենքի մասնակի վերանորոգում:
- Համայնքի հանրակրթական դպրոցների շենքերի ընթացիկ նորոգում, ներքին հարդարում, դռների, պատուհանների և սանհանգույցների փոխարինում, ջեռուցում՝ բարելավելու դպրոցական հանրակրթության որակը:
- Նախկին տարածաշրջանային կենտրոնի հետ մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և շահագործում՝ համագործակցության ներգրավելու մարզի մասնավոր տրանսպորտային կազմակերպություններին:
- Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության և մատուցման մակարդակի բարձրացում պետական պատվերի շրջանակներում:

- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկուս արտակարգ իրավիճակներում համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացուս կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

2017-2021թթ. ընթացքում Հայաստանում ընթացող վարչատարածքային բարեփոխումների և (կամ) միջհամայնքային համագործակցության շրջանակներում նախատեսվում են հետևյալ նպատակային ծրագրերը և միջոցառումները՝

- ՀՏԶ-ի հետ՝ «Համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգման և սպասարկման աղբահանության ծառայությունների ստեղծում, ներհամայնքային հասարակական տրանսպորտի համակարգի ձևավորում, դպրոցականների ու երիտասարդության շրջանում բնապահպանական և ագրոբիզնեսի կառավարման գիտելիքների տարածում» ծրագիրը:
- Հնարավոր այլ ծրագրեր ու միջոցառումներ:

2017 - 2021թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Կատարելով համայնքի 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումները՝ պետք է հաշվի առնել

1) Համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսման համար որպես ելակետային տվյալներ ե ընդունվել 2015-16թթ. բյուջեների մուտքերի փաստացի գանձման ցուցանիշները՝ յուրաքանչյուր տարի նախատեսելով որոշակի աճ: Մուտքերի աճը նախատեսվել է՝ հիմք ընդունելով համայնքի հետագա զարգացման հետ կապված պատկերացումներն ու ակնկալիքները, նոր ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը և դրանց դիմաց վճարների գանձման հնարավորությունները և այլն:

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գումարները կանխատեսելու համար, որպես 2017թ ցուցանիշ հիմք է ընդունվել նախկին տարիների ելակետային տվյալները:

Աղյուսակ 3. Համայնքի 2015-2016թ.թ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

	Մուտքերի անվանումը	2016. փաստ.	2017թ. նախատ.	2018թ. փաստ.	2019թ. նախատ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	37853.6	40391.9	40882.2	40932.2	40932.2	40932.2
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)	36810.2	36817.9	36882.2	36932.2	36932.2	36932.2
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	11065.0	11174.7	11265.0	11315.0	11315.0	11315.0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	7202.4	7145.8	7165.0	7215.0	7215.0	7215.0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	215.0	215.0	215.0	215.0	215.0	215.0
	Հողի հարկ	6987.4	6930.8	6950.0	7000.0	7000.0	7000.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	3292.6	3442.9	3500.0	3500.0	3500.0	3500.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	3292.6	3442.9	3500.0	3500.0	3500.0	3500.0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	255.0	291.0	300.0	300.0	300.0	300.0
	Տեղական տուրքեր	255.0	291.0	300.0	300.0	300.0	300.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	**315.0**	**295.0**	**300.0**	**300.0**	**300.0**	**300.0**
	Պետական տուրքեր	**315.0**	**295.0**	**300.0**	**300.0**	**300.0**	**300.0**
1.5	Այլ հարկային եկամուտներ						
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ						
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե						

Համայնքն իր ֆոնդային բյուջեում կարող է նախատեսել կապիտալ ծախսեր ու ծրագրեր հիմնականում համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից համայնքի ֆոնդային բյուջե հատկացումների հաշվին, ինչպես նաև հողերի իրացումից մուտքերի հաշվին:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատողների (6 հաստիքային միավոր) 2016 թվականի միայն աշխատավարձի տարեկան ֆոնդը նախատեսվել է 17204,0 հազ. դրամ իսկ աշխատակազմի պահպանման մյուս ընդհանուր ծախսերը՝ 4015,0հազ. դրամ: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ՝

2017-2021թթ. ընթացքում համայնքի ՏԻՄ-ը նախատեսում է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի և պահպանման այլ ծախսերի բարձրացում՝:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ համայնքի 2016-21թթ. տարեկան բյուջեներից (տե՛ս աղյուսակ 3 հնարավորություն կլինի կատարելու մոտ 10 մլն դրամի ծախսեր կապիտալ աշխատանքներ կատարելու համար, եթե, իհարկե, պայմանականորեն ընդունենք, որ տվյալ տարվա վարչական բյուջեում, բացի համայնքի աշխատակազմի պահպանման ծախսերից, գործառական դասակարգման այլ ուղղություններով ընթացիկ ծախսեր չեն նախատեսվելու և չեն իրականացվելու: Իսկ եթե տվյալ տարվա վարչական բյուջեում նախատեսվեն և իրականացվեն այլ ընթացիկ ծախսեր ևս, ապա բնականաբար, ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսերի և ծրագրերի համար նախատեսվող միջոցներով կպակասեն համապատասխան չափով:

Այսպիսով, համայնքի տվյալ տարվա ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսերի չափն ուղղակիորեն կախված կլինի նրանից, թե որքան կկազմեն ընթացիկ ծախսերի ընդհանուր գումարը համայնքի այդ տարվա վարչական բյուջեում և որքան գումար կմնա ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսերի կատարելու համար:

5.ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայում արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-ի կողմից ընտրված ռազմավարությունից, առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ 4)՝ ներառելու համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում:

Աղյուսակ 4. Համայնքի 2017-21թթ. ՀԶՀԾ-ում ներառելու համար առաջարկվող ծրագրերի ցանկը

/հ	Ծրագրի անվանումը	Ծրագիրն առաջարկողը	Ծրագրի մոտավոր արժեքը, ֆինանսավորման աղբյուրը, հազ. դրամ
1			
2	Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումներ	Համայնքապետ	1300,000
3	Ոռոգման ներտնտեսային ցանցի կիսախողովակների տեղադրում	Համայնքապետ	2500,000
4	Համայնքային փողոցների ցերեկային լույսերի մասնակի տեղադրում	Համայնքապետ	3000,000
5	Համայնքապետարանի շենքի մասնակի վերանորոգում	Համայնքապետ	2000,000
6	Հիմնական դպրոցի մասնակի նորոգում	Համայնքապետ	200,000
7	Փողոցների համահարթեցում	Համայնքապետ	1000,000

8	Կենտրոնական փողոցում մայթի կառուցում	Համայնքապետ	
9	Համայնքի գերեզմանատան ճանապարհի մասնակի նորոգում	Համայնքապետ	400,000

Առաջարկվող ծրագրերի առաջնահերթությունները որոշելու նպատակով, ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից սահմանվել են ծրագրերի գնահատման հետևյալ չափանիշները՝

- հանրության աջակցությունը,
- ուղղակի և անուղղակի շահառուների թիվ,
- հարատևություն (կենսունակություն),
- ազդեցություն սոցիալական խոցելի խմբերի վրա, աղքատության նվազեցում,
- հիմնական միջոցների (ենթակառուցվածքների) պահպանում:

Կիրառելով ծրագրերի առաջնահերթությունների որոշման մասնակցային կառավարման մեթոդը և լրացնելով ծրագրերի գնահատման սահմանված չափանիշները՝ ՀԶՔԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով Խորհրդակցական մարմինն իր նիստում քննարկել և որոշել է վերևում առաջարկված համայնքային ոլորտային ծրագրերի առաջնահերթությունները:

Ինչպես երևում է ՀԶՀԾ-ի 4-րդ բաժնի աղյուսակ 3-ից, համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերը հնգամյա կտրվածքում կազմելու են 17600.0 հազար դրամ: Դա նշանակում է, որ համայնքի բյուջեի շնանսավորմամբ ՀԶՀԾ-ում հնարավոր է ներառել ծրագրեր միայն նշված գումարի սահմաններում համայնքի մանկապարտեզի, ոռոգման ներտնտեսային ցանցի վերանորոգման ծախսերի համար: Սխատեսվում է դիմել դոնոր կազմակերպություններին:

Աղյուսակ 6. Համայնքի 2017-2021թթ. ֆինանսապես ապահովված ընդհանուր և ոլորտային ծրագրերի ամփոփագիր

/հ	Ծրագրի անվանումը	Չափի միավորը	Ծրագրի քանակական ծավալը	Ծրագրի արժեքը, հազ. դրամ	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
					2017	2018	2019	2020	2021	Համայնքի բյուջե	Դոնոր կազմ.-եր	Պետբյուջե
1.	Մանկապարտեզի կառուցում	հատ	1	44000,0		4000,0				4000,0	40000,0	
2	Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառում /սելավատարի մաքրում/	գծմ	1	1300.0		1300,0				1300,0		
3	Ոռոգման ցանցերի կիսախողովակների տեղադրում	կմ	5	10000.0		1500,0	1000,0			2500,0	2500,0	
4	Համայնքային փողոցների ցերեկային լույսերի մասնակի տեղադրում	կմ		3000.0	1000,0	1000,0		1000,0		3000,0		
5	Համայնքապետարանի շենքի մասնակի վերանորոգում	քմ		2000,0	400,0	800,0	800,0			2000,0		
6	Հիմնական դպրոցի մասնակի նորոգում	քմ		200,0						200,0		
7	Փողոցների համահարթեցում	կմ		2000.0		1000,0			1000,0	2000,0		
8	Կենտրոնական փողոցում մայթի կառուցում	կմ		1800.0	900 ,0	900,0				1800,0		
9	Համայնքի գերեզմանատան ճանապարհի մասնակի նորոգում	կմ		800,0	400,0		400,0			800,0		
	Ընդամենը			65100,0	2700,0	10500,0	2200,0	1000,0	1000,0	17600,0	425000,0	

Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ

Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերից (գլխավոր հատակագիծ, գոտիավորման նախագիծ, ընթացիկ քաղաքաշինական քարտեզ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն և այլն) կա միայն քաղքաշինական կանոնադրությունը:

Քանի որ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման (մշակման) պատվիրատուն համայնքն է, ժամանակահատվածում նախատեսվում է համագործակցություն ծավալել Հայաստանում գործող նախագծային ինստիտուտների հետ՝համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքների նախահաշիվները, համայնքի բյուջեով նախատեսելու համար:

Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ

2017-2021թ.թ. ընթացքում համայնքի սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել հետևյալ միջոցառումները՝

լայն բացատրական աշխատանք կատարել բնակչության հետ՝ կենցաղային աղբը չթափելու դրա համար չնախատեսված վայրերում, զերծ մնալու բնության և շրջակա միջավայրի աղտոտումից ու վնասումից,

- սահմանել վերահսկողություն համայնքի բնակավայրերի ջրամատակարարման ջրային ավազաններում՝ արգելելու անասունների մուտքն ավազաններ, կանխարգելելու բնության և շրջակա միջավայրի աղտոտումը և վնասումը, ինչպես նաև սուր վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման վտանգը համայնքում,
- յուրաքանչյուր տարի գարնանը համայնքում կազմակերպել «Մաքուր համայնք» կարգախոսով 2-3 շաբաթօրյակներ՝ իրականացնելու բնության և շրջակա միջավայրի մաքրության, ծառատնկման աշխատանքներ, դրանց ներգրավելով նաև երիտասարդներին և դպրոցականներին:
-

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ

Չնայած ՀՀ գործող օրենսդրությամբ ՏԻՄ-երն այս ոլորտում առայժմ պարտադիր լիազորություններ գրեթե չունեն, այնուամենայնիվ հաշվի առնելով, որ 2016 թվականի հուլիսի 29-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել ՀՀ 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունում ամրագրված մոտեցումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ համայնքի ՏԻՄ-երը շահագրգռված են համայնքում գործարար միջավայրի բարելավմամբ և պատրաստակամ են ըստ ամենայնի օժանդակել այս ոլորտում ցանկացած նոր նախաձեռնության, քանի որ այն մեծապես կնպաստի համայնքում նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության եկամուտների ավելացմանը և վճարունակության բարձրացմանը, համայնքի բյուջետային սեփական միջոցների հավաքագրման մակարդակի բարձրացմանը և ծավալի մեծացմանը, և, այս ամենի արդյունքում՝ համայնքի ընդհանուր զարգացմանը:

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ 2017-2021թ.թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ըստ ամենայնի աջակցել համայնքում գործող արտադրական ձեռնարկություններին՝ աստիճանաբար ընդլայնելու արտադրության ծավալները և ավելացնելու աշխատատեղերի քանակը,
- աջակցել համայնքում նոր արտադրություններ և աշխատատեղեր ստեղծելու նախաձեռնություն ցուցաբերող գործարարներին՝ տրամադրելով նրանց գործունեություն իրականացնելու համար համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալման, տեղական տուրքերի և վճարների զեղչով արտոնություններ,
- համայնքում խթանել գյուղատնտեսության, անասնապահական և թռչնապահական մթերքների (մասնավորապես՝ գյուղմթերքի, կաթի, մսի, ձվի) արտադրության, հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծումը, գործարկումը և զարգացումը,
- համայնքում կազմակերպել և աստիճանական զարգացնել տնային պայմաններում բնական հյութերի արտադրությունը և իրացումը,
- համայնքում խթանել առևտրի և ծառայությունների փոքր ու միջին նոր կետերի բացումը, բնակչությանը և հյուրերին պատշաճ մակարդակով սպասարկումը՝ պաշտպանելով դրանց սեփականատերերի իրավունքները և շահերը,
- աստիճանաբար նորոգել և բարեկարգել միջհամայնքային ճանապարհները և փողոցները, անցկացնել արտաքին լուսավորության համակարգերեր, տեղադրել ճանապարհային նշաններ՝ նպաստելու համայնքում գործարար միջավայրի բարելավմանը և բիզնեսի զարգացմանը,

Աղետների ռիսկի կառավարման հիմնական մոտեցումներ

Համայնքում աղետների ռիսկի կառավարմանն ուղղված՝ 2017-2021թ.թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքի աղետների ռիսկերի կառավարման հարցերում շարունակել համագործակցությունը հանրապետական համապատասխան մարմինների հետ՝ մասնավորապես ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ,
- ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների հայտ, որի արդյունքում պետք է կազմվի համայնքի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզը,
- համայնքի բնակչության իմացության, հմտությունների, գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և համայնքում առկա ռեսուրսների բացահայտում, որոնք հնարավոր է ուղղել աղետների ռիսկի նվազեցմանը նպաստող համայնքահեն միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը,
- համայնքի խոցելիության և կարողությունների գնահատում, ներառյալ այդ գործընթացի կազմակերպման և իրականացման խմբի ձևավորումը, նախապատրաստական աշխատանքները, տվյալների հավաքագրումը և հետազոտումը՝ համապատասխան գործիքների և մեթոդների ընտրությամբ, վերլուծական աշխատանքների իրագործումը՝ յուրաքանչյուր փուլում ձեռնարկվող քայլերի և ակնկալվող արդյունքների ամրագրմամբ և ձևակերպմամբ,
- համայնքում աղետների ռիսկի կառավարման գործողությունների և միջոցառումների պլանի կազմում և իրականացում,
- բերքի պահպանման նպատակով բնակավայրերում հակակարկտային կայաններ տեղադրելու միջոցառումների ձեռնարկում՝ ֆինանսավորման արտաքին աղբյուրներից (պետություն, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններ, մասնավոր ներդրողներ) անհրաժեշտ միջոցների հայթայթում,
- համայնքում աղետների ռիսկի կառավարման կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ

Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված՝ 2017-2021թ.թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները և միջոցառումները՝

- համայնքի սեփականություն համարվող կոմունալ ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, ըստ հնարավորությունների՝ նորոգում և զարգացում,
- համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքի կազմակերպում,

- վերահսկողություն համայնքի բնակչությանը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր կազմակերպությունների կողմից մատուցվող կոմունալ ծառայությունների (գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, բնակավայրի բարեկարգում և կանաչապատում և դրանց պահպանում և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման նկատմամբ,

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանն ուղղված միջոցառումներ

Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը ոլորտում

նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքի բնակչության իրազեկվածության բարձրացում՝ ՀՀ տեղական ինքնակառավարման ոլորտի օրենսդրության և համայնքի ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ ,
- համայնքի կարիքների և հիմնախնդիրների պարբերական քննարկում, վերլուծում և գնահատում՝ ֆոկուս-խումբ քննարկումների, համայնքային հանդիպումների, ժողովների և բնակիչների հետ անմիջական շփումների և երկխոսությունների միջոցով,
- բնակիչների ներգրավում համայնքի բյուջեի և զարգացման ծրագրերի մասնակցային պլանավորման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման գործընթացներում,
- համայնքի բնակիչների շահերի պաշտպանություն և համախմբում՝ համայնքի որոշակի խնդիրների լուծման, հանրային ծառայությունների մատուցման շուրջ,
- համայնքի ՏԻՄ-ի (ղեկավար, ավագանի), աշխատակազմի, ակտիվ բնակիչների շարունակական կրթում և վերապատրաստում տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության բնագավառում:
-

7. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Այսպիսով, համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը հիմք կհանդիսանա համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման աշխատանքները կազմակերպելիս: Անցյալ տարիների փորձը ցույց տվեց, որ տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ աշխատանքը մեծապես կախված է բյուջետավարման գործընթացի ճիշտ կազմակերպումից:

Շատ կարևոր է եկամուտների աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը:

Ելնելով համայնքի զարգացման հնգամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, համայնքապետարանի աշխատակազմը մշակում է կոնկրետ ծրագրեր,

որոնցով կարելի է հարց ներկայացնել հանրապետական բյուջեից ներդրումներ ստանալու համար, փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել բնակիչների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների միջոցները

Աշխատակազմի ՝քարտուղար՝ *Գ. Զաքարյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեպատ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ. Այգեպատ, (0235) 60095, aygepat.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունվարի 2017 թվականի N 05- Ն

ԱՅԳԵՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին " Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով Այգեպատ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Այգեպատ համայնքի 2017 թվականի տարեկան բյուջեն՝ համաձայն հավելվածի :

Կողմ (6) Դեմ Ձեռնպահ

Կողմ ՁԱՔԱՐՅԱՆ ՅՈՒԼԱԿ
Կողմ ԷԼՈՅԱՆ ԱՐՍԵՆ
Կողմ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՄԱՐՏԻԿ
Կողմ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ
Կողմ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍՄԲԱԹ
Կողմ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՐԳՈԺԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արարատի մարզի Այգեպատ համայնքի

Ավագանու՝ 2017 թվականի հունվարի 27-ի թիվ 5-Ն որոշման

ԱՅԳԵՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ

Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝ 36793.9

1 Հարկեր և տուրքեր, այդ թվում՝ 11150.7

1/1 Գույքային հարկեր անշարժ գույքից,

այդ թվում 7145.8

Գույքահարկ շենքերի և շինությունների, որից՝ 215.0

Ֆիզիկական անձանցից՝ 215.0

Հողի հարկ, այդ թվում՝ 6930.8

Ֆիզիկական անձանցից՝6930.8

1/2 Գույքահարկ փոխադրամիջոցներից՝3442.9

1/3 Ապրանքների օգտագործման և իրացման

թույլտվության համար՝267.0

այդ թվում տեղական տուրքեր՝267.0

ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝46.0

Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝46.0

բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված

նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ

վառելիքի և/ կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված

նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի

թույլտվության ՝150.0

Ժամը 24-00-ից հետո աշխատելու համար՝ 25.0

1/4 Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման

այլ պարտադիր վճարներ ՝295.0

այդ թվում աղբահանություն ՝295.0

2. Պաշտոնական դրամաշնորհներ ՝24267,2

Ընթացիկ ներքին դրամաշնորհներ/ դոտացիա/ ՝24267.2

3. Այլ եկամուտներ, այդ թվում՝ 1376.0

Գույքի վարձակալությունից մուտքեր՝ 1376.0

Հողերի վարձակալություն ՝ 1376.0

Վարչական բյուջեի ծախսերը՝

4111 - Աշխատողների աշխատավարձ ՝ 15980.0

4212 – Էներգետիկ ծառայություններ ՝ 420.0

4213- կոմունալ ծառայություններ ՝1076.0

4214 – կապի ծառայություններ ՝ 160.0

4215 - Ապահովվագրական ծախսեր ՝75.0

4216 Գույքի և սարքավորումների վարձակալություն ՝600.0

4232- համակարգչային ծառայություններ ՝180.0

4234- Տեղեկատվական ծառայություններ՝ 140.0

4241- Մասնագիտական ծառայություններ ՝170.0

4251- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում

և պահպանում՝350.0

4252 Մեքենաների և սարքավորումների ընթացիկ

նորոգում և պահպանում ՝200.0

4261- գրասենյակային նյութեր ՝250.0

4264 - տրանսպորտային նյութեր ՝1250.0

4267 - կենցաղային նյութեր՝ 200.0

4269 - ներկայացուցչական ծախսեր ՝650.0

4819- նվիրատվություն շահույթ չհետապնդող

Կազմակերպություններին ՝250.0

4726- հուղարկավորության նպաստեր՝ 520.0

4729- այլ նպաստներ ՝ 2000.0

4891- Պահուստային միջոցներ ՝ 11222.9

Ընդամենը՝ 36793 .9

Այգեպատ համայնքի 2017 թվականի ֆոնդային բյուջեի եկամտային մաս

1. Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի մուտքի ֆոնդային բյուջե՝ 3570915 դրամ

2. Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ, որն ուղղված է ծախսերի ծածկմանը՝ 403375.5

Ընդամենը եկամուտներ՝ 3974290.5 դրամ

Ծախսային մաս՝

Անկախության փողոցի մայթեզրի կառուցում --- 04.05.01.58 կատեգորիայի 5112 հոդվածին՝ 3 974 2905 դրամ

Ընդամենը՝ 39742905

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Զաքարյան